

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ 2015թ. ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2015թ. տարեկան ծրագրի շրջանակներում ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կողմից տարվա ընթացքում իրականացվել է 91 աուդիտ, որից՝

- ֆինանսական հաշվետվությունների, ֆինանսական բնույթի տեղեկություններում և հաշվապահական հաշվառման գրանցումներում արտահայտված տվյալների արժանահավատության գնահատման, ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինականության ստուգումների մասով՝

մարզի թվով 3 քաղաքային համայնքներում (Ախթալա, Թումանյան և Շամլուղ), մարզային ենթակայության թվով 49 կրթական (Վանաձորի թիվ 1, 2, 9, 12, 15 և թիվ 1 հատուկ, Անտառամուտի, Արջուտի, Բագումի, Դարպասի, Եղեգնուտի, Փամբակի, Ալավերդու թիվ 2, Ախթալայի 1 և 2, Աքրու, Թեղուտի, Լորուտի, Քարկոփի, Օձունի թիվ 1, Սպիտակի թիվ 1, 3, 4, 5 և 8, Արևաշողի, Գոգարանի, Լեռնավանի, Հարթագյուղի, Ղուրսալիի, Նորհաչակալի, Ջրաշենի, Սարալանջի, Խնկոյանի, Ստեփանավանի թիվ 3, 6 և վարժարան, Գարգառի, Գյուլագարակի, Լեջանի, Կաթնաղբյուրի, Կուրթանի, Պուշկինոյի, Տաշիրի թիվ 2, Մեծավանի թիվ 1 և 2, Սարատովկայի, Լեռնահովիտի դպրոցներ), 1 մշակութային (Լոռի Փամբակի երկրագիտական թանգարան),

- «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման օրինականության մասով՝

մարզային ենթակայության առողջապահական 31 ընկերություններում և կազմակերպություններում (Վանաձորի բժշկական կենտրոն, Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց, Լոռու մարզային հոգեկայրդարան. դիսպանսեր, Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա, Գուգարք կենտրոնական պոլիկլինիկա, Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա, Վանաձորի թիվ 4 պոլիկլինիկա, Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա. Սպիտակի բժշկական կենտրոն, Տաշիրի բժշկական կենտրոն, Գյուլագարակի ԱԱՊԿ, Մեծավանի առողջության կենտրոն, Ստեփանավանի բժշկական կենտրոն, Գարգառի ԱԱՊԿ, Ալավերդու բժշկական կենտրոն, Ախթալայի առողջության կենտրոն, Դսեղի առողջության կենտրոն, Մարգահովիտի առողջության կենտրոն, Վահագնիի առողջության կենտրոն, Լեռնապատի առողջության կենտրոն, Մեծ Պարնիի առողջության կենտրոն, Շահումյանի առողջության առաջնային պահպանման կենտրոն՝ ԱԱՊԿ, Գուգարքի ԱԱՊԿ, Ուրուտի ԱԱՊԿ, Թումանյանի առողջության կենտրոն, Լոռու մարզային արյան փոխներարկման կայան, Արևածագի ԱԱՊԿ, Աքրու ԱԱՊԿ, Արևաշողի ԱԱՊԿ, Ագարակի ԱԱՊԿ, Կուրթանի ԱԱՊԿ),

- ֆինանսական կառավարմանը, ներքին հսկողությանն առնչվող գործառույթների մասով՝

ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմում (ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման, գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության, անձնակազմի կառավարման բաժիններ, ինչպես նաև 4 սոցիալական աջակցության տարածքային գործակալություններ):

Վերոնշյալ կազմակերպություններում /քաղաքապետարաններ, դպրոցներ/ ներքին աուդիտի ստանդարտների համաձայն՝ բավարար տեղեկությունների փաստաթղթային ստացման հիման վրա, փաստացի իրականացվել է աուդիտ և կազմվել աուդիտի հաշվետվություն: Հաշվետվությունները ներառել են աուդիտի ընդհանուր նկարագիրը, գտնվելու վայրը, գործունեության իրավական հիմքերը, գործունեության շրջանակները, խնդիրները, աուդիտի արդյունքները, եզրահանգումները, առաջարկությունները, հանձնարարականները: Իրականացվել են ֆինանսական հաշվետվություններում, ֆինանսական բնույթի տեղեկություններում արտահայտված տվյալների արժանահավատության գնահատում, ֆինանսական գործառույթների առանձին տեսակների օրինակության ստուգում, հաշվապահական հաշվառման գրանցումներում արտացոլված տվյալների արժանահավատության գնահատում: Աուդիտի ընթացքում աուդիտի են ենթարկվել ֆինանսական կառավարմանը, ներքին հսկողությանն առնչվող բոլոր էական ըստ ծավալի և բնույթի գործառույթները:

Հրավիրվել է մարզպետարանի Ներքին աուդիտի կոմիտեի 6 նիստ և քննարկվել է աուդիտի հաշվետվությունները, որոնց արդյունքում կայացվել են համապատասխան որոշումներ. համայնքի ղեկավարներին, ՊՈԱԿ-ների և առողջապահական ընկերությունների տնօրեններին, բաժինների պետերին տրվել են համապատասխան հանձնարարականներ և ժամկետներ՝ արձանագրված խախտումների և թերությունների վերացման նպատակով:

Քանի որ անցած տարիների աուդիտի գործունեությունը փաստել է, որ 2013թ. համեմատ 2015թ. պատկերը կտրուկ փոխվել է, նախկին խախտումները և թերությունները համարյա չեն արձանագրվում, որը մեզ հնարավորություն է տալիս մեկ քայլ ավելի առաջ գնալ: Այսինքն՝ աուդիտի ուսումնասիրման շրջանակները ավելի ընդգրկել, նրանում ներառելով այնպիսի գործառույթներ, որոնք մարզի կազմակերպություններին առաջադրում են վերադաս ստուգող կատույցներ:

Ստորև շարադրվածը հիմնականում վերաբերում է այն խախտումներին կամ թերություններին, որոնք մեր ջանքերով գրեթե արմատախիլ է եղել: Այսպես՝

Աուդիտի ընթացքում արձանագրվել են բազմաբույթ խախտումներ և թերություններ, որոնց մի մասը ընդհանրական են և նույնությամբ կրկնվում են բոլոր կազմակերպություններում: Առավել հատկանշական են հետևյալ երևույթները՝

1. Տնօրենների կողմից տրված հրամաններում բացակայում են իրավական հիմքերը կամ ՀՀ օրենքների և ՀՀ կառավարության որոշումների համապատասխան հոդվածներին հղումները:

- Խախտումներով է իրականացվել հրամանագրքի վարումը, որը շատ անգամ չի համապատասխանում «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի պահանջներին:

- Առկա են դեպքեր, երբ հրամանագրքերը էջակալված, կարված և կնիքված չեն:

- Հրամանագրքերում առկա են ոչ գրագետ ձևակերպումներ, ինչպես նաև նախապես կամ ուշացումով գրված հրամաններ, որոնց ընթերցումն իսկ, մեղմ ասած, զավեշտ է առաջացնում:

- Հրամանագրքերում կատարվել են ինչպես հաստիքացուցակի, այնպես էլ տնօրենի արձակուրդի օրերի վերաբերյալ ապօրինի գրառումներ:

- Առկա են սխալ ձևակերպումներ աշխատողների արձակուրդային հրամաններում:

Ժամանակային խախտումներով են վճարվել աշխատողների արձակուրդային գումարները: Արձակուրդային գումարների վճարումների մի մասը կատարվել են որոշակի ուշացումով կամ խախտվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը, համաձայն որի վճարումը պետք է իրականացվի ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդն սկսելուց 3 օր առաջ:

- **Առկա են խախտումներ աշխատողների միջին աշխատավարձի հաշվարկելիս՝ չեն կատարվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 195 հոդվածի պահանջները:** Առանձին դեպքերում միջին աշխատավարձը հաշվարկվել է սխալ կամ խախտվել է ՀՀ ԱՕ 195 հոդվածի 2-րդ կետի պահանջները՝ այն է. «Աշխատողի միջին ամսական աշխատավարձի չափը որոշվում է այդպիսի պահանջ առաջանալու ամսվան նախորդող վերջին տասներկու ամիսների ընթացքում տվյալ գործատուի կողմից աշխատողի համար հաշվարկված աշխատանքի վարձատրության բոլոր տեսակների (հիմնական աշխատավարձ, լրացուցիչ աշխատավարձ՝ հավելումներ, հավելավճարներ, լրավճարներ, պարգևատրումներ և այլն) ընդհանուր գումարը տասներկուսի բաժանելու միջոցով: Խախտվել է նաև նույն հոդվածի 7-րդ կետի պահանջները՝ «Այն դեպքում, եթե սույն հոդվածով սահմանված կարգով հաշվարկված միջին ամսական կամ միջին ժամային աշխատավարձերը համապատասխանաբար ցածր են տվյալ պահին գործող նվազագույն ամսական աշխատավարձից կամ ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափից, ապա միջին ամսական կամ միջին ժամային աշխատավարձերի փոխարեն համապատասխանաբար հիմք է ընդունվում տվյալ պահին գործող նվազագույն ամսական աշխատավարձը կամ ժամային տարիֆային դրույքի նվազագույն չափը»

- Կամայականորեն կատարվել են հաստիքների դրույքաչափերի ավելացումներ կամ նվազեցումներ:

- Հրամանագրքերում առկա են գույքի դուրս գրման վերաբերյալ հրամաններ՝ առանց գույքի անվանացանկերի:

- Աշակերտների հաշվառումը պետք է կատարել սահմանված կարգով: Հանրակրթական և հատուկ դպրոցներում աշակերտների թիվը ավելի ցույց տալու հետևանքով պետական բյուջեից կատարվել են ավելի ֆինսավորումներ:

2. Դպրոցի կառավարման խորհրդի ձևական գործունեության մասին

- Համաձայն դպրոցի կանոնադրության՝ դպրոցի կառավարման խորհուրդը ժամանակին չի հրավիրել և չեն անցկացվել նիստեր:

- Դպրոցի տնօրենի հրամանների, ինչպես նաև դպրոցի կառավարման խորհրդի արձանագրությունների գրքերը էջակալված, կարված և կնիքված չեն /վերջինիս դեպքում խախտվել են ՀՀ կառավարության 20.10.2005թ. թիվ 1882-Ն որոշման պահանջները/:

3. Դպրոցներում ոչ պատշաճ ձևով են իրականացվում դասաժամերի հաշվառումները.

- Դպրոցում չկա ուսուցչի բաց թողած և փոխարինած ժամերի հաշվառման մատյան, որի պատճառով խախտվում են ՀՀ կրթության և գիտության նախարարի 18.01.2011թ. «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատություններում գործաժողովի ենթակա փաստաթղթերի անվանացանկը հաստատելու մասին» թիվ 23-Ն որոշման պահանջները:

- Դպրոցում չի վարվում աշխատակիցների հաճախումների գրանցա-մատյան (տաբել), թեև հաշվապահական փաստաթղթերում առկա են լրացված տաբելներ: Այս հանգամանքը տեղիք է տալիս կարծելու, որ դրանք անհիմն են կամ խախտվել են ՀՀ կառավարության 25.08.2005թ. N1471-Ն որոշման պահանջները:

- Մի շարք դեպքերում խախտվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 99 հոդվածի պահանջները /համատեղությամբ աշխատողին հաստիքից ավելի դասաժամ տրամադրելով՝ համատեղությամբ աշխատանքը հիմնական աշխատաժամանակից դուրս աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատողի կատարած աշխատանքն է/:

- **Խախտվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 90-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները /սա վերաբերում է աշխատանքային գրքույկի վարմանը/:**

4. Խախտվել են աշխատողներին տարաբնույթ վճարումների կարգը և չափերը, կապված վարձատրության, արձակուրդի, ինչպես նաև տոնական և հիշատակի օրերի հաշվարկման հետ, մասնավորապես՝

- **Առկա են գործուղման գումարների հաշվարկման և վճարման խախտումներ, որով խախտվել է ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2335-Ն որոշմամբ հաստատված ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման կարգը:** Գործուղումներ մեկնելիս չեն տրվում կանխավճարներ կամ խախտվել է ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2335-Ն որոշման, ինչպես նաև «Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման վճարման» կարգի պահանջները, այն է՝ «ՀՀ տարածքում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ծառայողական գործուղման մեկնած աշխատողին գործուղում մեկնելուց առաջ օրապահիկը վճարվում է ամբողջությամբ, գիշերավարձը և ճանապարհածախսը՝ սույն կարգով սահմանված նվազագույն գումարի չափով»:

- **Խախտվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 185-րդ հոդվածի պահանջները՝ գիշերային պահակները տոնական և հիշատակի օրերին չեն վարձատրվել առնվազն կրկնակի չափով:**

- **Աշխատողներին տրված հերթական արձակուրդի հրամաններում չի նշվել արձակուրդի ժամանակահատվածը, իսկ արձակուրդում գտնվող անձինք ազատվել են աշխատանքից, որով խախտվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 114 հոդվածի 2-րդ կետի, 167 հոդվածի 2-րդ կետի և 168 հոդվածի պահանջները:**

- **Խախտվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 139-րդ հոդվածի պահանջները, համաձայն որի՝ աշխատաժամանակի առավելագույն տևողությունը, ներառյալ՝ արտաժամյա աշխատանքի տևողությունը, չի կարող անցնել օրական 12 ժամից, իսկ շաբաթվա ընթացքում՝ 48 ժամից:** **Խախտվել են նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի հոդվածի 146-ի պահանջները:** Խախտվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 139-րդ հոդվածի պահանջները, համաձայն որի՝ աշխատաժամանակի առավելագույն տևողությունը, ներառյալ՝ արտաժամյա աշխատանքը, չի կարող անցնել օրական 12 ժամից /հանգստի և սնվելու համար՝ ընդմիջումը ներառյալ/, իսկ շաբաթվա ընթացքում՝ 48 ժամից: Խախտվել է ՀՀ ԱՕ-ի 146 հոդվածի պահանջները, այն է. «Գործատուի պահանջով արտաժամյա

աշխատանքը իրար հաջորդող երկու օրվա ընթացքում չպետք է գերազանցի 4 ժամը. իսկ տարվա ընթացքում 180 ժամը»:

• **Աշխատանքային պայմանագրերում առկա են թերություններ՝ կապված վնասակարությամբ աշխատող աշխատակիցների աշխատաժամանակի հետ:** Օրինակ՝ բժիշկ-լաբորանտը պայմանագրով աշխատաժամանակը նշված է 39 ժամ, ինչը հակասում է աշխատանքային օրենսգրքի 140.1/3 հոդվածին, այն է՝ «այն աշխատողների համար, որոնց աշխատավայրում վնասակար գործոնների սահմանային թույլատրելի մակարդակը տեխնիկական կամ այլ պատճառներով հնարավոր չէ իջեցնել աշխատողների առողջության և անվտանգության մասին իրավական ակտերով սահմանված՝ առողջության համար անվտանգ մակարդակի, աշխատաժամանակը սահմանվում է ոչ ավելի, քան շաբաթական 36 ժամ»:

• **Ուշացումով են վճարվել աշխատողների արձակուրդային գումարները, որով խախտվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջները:**

• **Խախտվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 93-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները /աշխատողի փորձաշրջան/:**

• **Աշխատողների վերջնահաշվարկների ժամանակ հաճախ խախտվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 170-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:** Վերջնահաշվարկների ժամանակ խախտվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 170-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները. այն է՝ «Ամենամյա արձակուրդը չօգտագործելու համար դրամական հատուցումը վճարվում է աշխատանքային պայմանագիրը լուծելիս: Հատուցման չափը որոշվում է տվյալ ժամանակահատվածի համար տրամադրման ենթակա ամենամյա արձակուրդի չօգտագործված օրերի քանակով: Եթե աշխատողին ամենամյա արձակուրդը չի տրամադրվել մեկ տարուց ավելի ժամանակահատվածով, ապա հատուցումը վճարվում է չօգտագործված բոլոր արձակուրդների համար»:

• **Խախտվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 192-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները.** «Աշխատավարձը յուրաքանչյուր ամիս հաշվարկվում և աշխատանքային օրերին վճարվում է աշխատողին ամսական առնվազն մեկ անգամ՝ մինչև հաջորդ ամսվա 15-ը»: Առկա է դեպք, երբ՝ հունվար ամսվա աշխատավարձը վճարվել է մարտ ամսին:

5. Խախտումներ են հայտնաբերվել կապված նախահաշիվների, ծախսային և հաշվապահական հաշիվների, դրամարկղային գործառնությունների վարման, եկամտային հարկի, ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների հաշվարկման հետ.

- **Ժամանակին չեն ներկայացվել 2012-2015թթ. ճշտված տարեկան նախահաշիվները, իսկ ֆինանսական հաշվետվությունները չեն ներկայացվել դպրոցի կառավարման խորհրդի քննարկմանը:**

- **Տնօրենների կողմից խախտվել են նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքի և «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջները:** «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն կազմակերպության ղեկավարը պատասխանատվություն է կրում հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերի պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում կազմակերպելու համար: Կազմակերպության ղեկավարը պարտավոր է սահմանել հաշվապահական հաշվառման քաղաքականությունը, ապահովել հաշվապահական հաշվառում վարելը, ֆինանսական հաշվետվություններ կազմելը և ներկայացնելը:

Գլխավոր հաշվապահը պատասխանատու է հաշվապահական հաշվառումը վարելու, ֆինանսական հաշվետվությունները ժամանակին կազմելու և ներկայացնելու համար:

Արգելվում է կատարման և ձևակերպման ընդունել ՀՀ օրենսդրության հակասող, ֆինանսական և պայմանագրային կարգապահությունը խախտող գործառնություններին վերաբերող փաստաթղթերը:

- **Մատակարարներից ձեռք բերված ապրանքանյութական արժեքները համապատասխան կարգով պահեստ չեն մուտքագրվել և ևելքագրվել,** ինչը հակասում է ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտների ՀՀ ՄՍ-2 «ՊԱՇԱՐՆԵՐ» ստանդարտի պաշարների հաշվառման հաշվապահական ձևակերպմանը:

- **Բուժհաստատություններում մատուցած ամբուլատոր-գործիքային ծառայությունների համար հաշիվ ապրանքագիր դուրս գրելու փոխարեն կազմվել է փոխադարձ հաշվարկների ստուգման ակտ:**

- **Կռախ ձևով խախտվել են «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի և 13-րդ հոդվածի պահանջները:**

Դրամարկղային գործունեության ստուգմամբ պարզվել է, որ գանձապահի պարտականությունները իրականացնում է կազմակերպության տնօրենը, որը հակասում է «Դրամարկղային գործառնությունների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջներին, համաձայն որի գանձապահի պարտականությունները չեն կարող դրվել կազմակերպության այն աշխատողների վրա, որոնք իրավունք ունեն ստորագրելու դրամարկղային փաստաթղթերը, բացառությամբ այն կազմակերպությունների, որոնց աշխատակիցների թիվը չի գերազանցում երեքը:

- **Մուտքագրված դրամական միջոցները դրամարկղի գրքում գրանցվել են ամսվա վերջին՝ մեկ գումարով, ինչը հակասում է 26.12.2002թ. դրամարկղային գործառնությունների մասին օրենքի 13 հոդվածը:** «Դրամարկղային գործառնությունները դրամարկղային գրքում չգրանցելու դեպքում գանձվում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի

հիսնապատիկի չափով, իսկ դրամարկղային գործառնությունները դրամարկղային գրքում չգրանցելն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, դրանք կրկին չգրանցելու դեպքում՝ տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Դրամարկղային գրքի վարման օրենսդրությամբ սահմանված կանոնները խախտելու դեպքում գանձվում է տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկի չափով, իսկ դրամարկղային գրքի վարման օրենսդրությամբ սահմանված կանոնների խախտումն արձանագրելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, դրանք կրկին խախտելու դեպքում՝ տուգանք՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսնապատիկի չափով»:

- **Խախտվել են «Եկամտային հարկի մասին» և «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքների պահանջները:**

- **Պատշաճ ձևով չեն կատարվել ՀՀ կառավարության 25.08.1998թ. N 525-Ն որոշման 2-րդ կետի պահանջները /ծախսային մաս/:**

6. Խախտումներ են արձանագրվել գույքի դուրս գրման, տարբեր միջոցների անհարկի վատնման, շինարարական աշխատանքների ծախսային մասերում և այլն:

- **Առանց հիմնավորման դուրս են գրվել վերջին տարիներին ձեռք բերված գույք:**

- **Խախտվել են ՀՀ կառավարության 01.06.2005թ. թիվ 1001-Ն որոշման պահանջները:** Ծառայողական մեքենաների վառելիքի ծախսը չի համապատասխանում ՀՀ պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների եւ մոտոտրանսպորտի վառելիքի, յուղերի ու քսուքների ծախսի նորմաները սահմանելու մասին որոշմամբ սահմանված նորմաներին:

- **Ամենամյա գույքագրման ցուցակներից բացակայում են տարբեր գույք և նյութական միջոցներ /առկա է ինքնաձիգ ուսումնական զենքի, ուսումնական ականանետի, նվիրատվությամբ ստացված գույքի կամ շիննյութերի ավելցուկ, կամ համակարգչային տեխնիկայի կամ վառելիքի պակասորդ/ կամ էլ առանց մասնագիտական եզրակացության դուրս գրված նյութական արժեքներ/:**

- *Առկա են նաև կազմակերպության համար ոչ շահավետ գործարքի փաստեր: Մասնավորապես՝ կազմակերպության կողմից խախտվել է ՀՀ կառավարության կողմից 25.08.1998թ. ընդունված թիվ 525-Ն որոշման պահանջները: Կազմակերպությունը որպես լրիվ մաշված և հետագա օգտագործման համար ոչ պիտանի գույքը, դպրոցի հաշվեկշռից դուրս է գրել հաշվեկշռային արժեքով, որի գնահատման և մասնագիտական եզրակացության համար կազմակերպությունը գնահատող է հրավիրել: Համաձայն ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 31.10.2007թ-ի թիվ 787-Ն հրամանով սահմանված ՊԿՀ-ների և ՊՈԱԿ-ների լրիվ մաշված գույքի դուրսգրման կարգի 6-րդ կետի պահանջի, կազմակերպությունը կարող է ընդգրկել անկախ գնահատող՝ փնտեսապես շահավետ լինելու*

դեպքում: Տվյալ դեպքում կազմակերպության կողմից անկախ փորձագետ ընդգրկելը չի կարելի համարել փորձաքննության շահավետ, քանի որ կազմակերպության կողմից դուրս գրված գույքը դեռևս գտնվում է դպրոցում: Հետագայում օրարելյու նպատակով անկախ գնահատողի եզրակացությունում նաև բացակայում է դուրս գրված գույքի գնահատումը որպես նյութական արժեք (մեքսիկոներ, սարքավորումների առանձին մասեր և այլն):

- Նյութական պատասխանատու անձի /գանձապահ/ հետ չի կնքվել նյութական պատասխանատվության վերաբերյալ պայմանագիր:

- Շինարարական վերանորոգման աշխատանքների ժամանակ ծախսը հաստատող փաստաթղթերը լրացվել են թերի՝ բացակայել են և թերությունների ակտերը և կատարողական ակտերը, և նախահաշիվը:

- Ամենամյա գույքագրման ցուցակներից բացակայում են դպրոցի հիմնանորոգումից առաջացած շիննյութերը:

7. Առանձին դեպքերում գնումները կատարվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքին ոչ համապատասխան, կամ խախտվել են «Ավելացված արժեքի հարկի մասին» և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքների պահանջները, որը պատասխանատվության այլ դաշտ կարող է փոխադրվել:

- Կարևորվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների պատշաճ կատարման համար նշանակել մասնագիտական հմտություններով և ունակություններով գնումների պատասխանատու որակավորված անձ:

- Խախտվել է «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի և «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի «ե» ենթակետի (կազմակերպությունը վարձակալությունից ստացված հասույթից պետք է վճարի նաև ԱԱՀ և շահութահարկ՝ 20% դրույքաչափով), ինչպես նաև նույն օրենքի 33-րդ հոդվածի պահանջները:

Հաճախ դպրոցները գնումներ են իրականացնում «Գնումների մասին» ՀՀ օրենքին ոչ համապատասխան՝ գնումներ կատարելով շուկայականից բարձր գներով, կամ էլ խախտելով « Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջները՝ այն է «Գնման առանձին ընթացակարգ անցկացնելուց խուսափելու նպատակով արգելվում է գնումը բաժանել առանձին չափաբաժինների՝...» գնման պայմանագրերը լրացվում են թերություններով և բացթողումներով, շարժական բացակայում են կնքման ամիս /ամսաթվերը, պայմանագրի գումարի չափերը և այլն: Տնօրենի հրամանով չի նշանակվել գնումները համակարգող պարասիանարու անձ կամ պարասիանարու սրորսարժանում: Խախտվել է

«Գնումների մասին» ՀՀ օրենքի հոդված 15, կեր 4-ի պահանջները: Խախտվել է նաև՝ վերոհիշյալ հոդվածի 5-րդ կերի պահանջները՝ «Գնումների համակարգող ստորաբաժանման աշխատակիցները, պաշտոնատար և հրավիրված անձինք պետք է ընդգրկված լինեն լիազորված մարմնի կողմից հրապարակվող գնումների որակավորված մասնագետների ցուցակում: Նշված ցուցակում անձինք ընդգրկվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության ինստիտուցիայի գնահատման նպատակով լիազորված մարմնի կազմակերպած քննությունը հաջողությամբ հանձնելուց հետո»:

• **Խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5 կետի պահանջները:** Առանց մրցույթի անցկացման ձեռք են բերվել լրացուցիչ քանակով անհրաժեշտ ապրանքներ, առանց մրցույթի ձեռքբերված ապրանքները ցույց են տրվել գնումների պլանում՝ որպես բանակցային ընթացակարգով ձեռք բերված:

Օրինակ՝ դեղորայքի գնումների պլանով նախատեսված քանակը սպառելուց հետո օրենքով նախատեսված կարգով բերվել են լրացուցիչ 20%: Սակայն այն սպառելուց հետո կրկին շարունակվել է ձեռք բերվել անհրաժեշտ ապրանքներ՝ արդեն առանց մրցույթի անցկացման:

• **Կազմակերպված մրցույթների ժամանակ բացակայում է պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմված արձանագրությունը ֆիքսված շուկայական գների վերաբերյալ:**

Գնման առարկաների անվանումները խմբավորված չեն համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 2012թ. դեկտեմբերի 25-ի թիվ 1170-Ն հրամանին: Օրինակ՝ մեկ խումբ «Բժշկական սարքավորումներ, գործիքներ եւ պարագաները ներկայացված են մի քանի խմբով:

• **Առանձին դեպքերում մրցույթի արդյունքների ամփոփման ժամանակ գները առանց ԱԱՀ-ի արժեքի գների հետ համեմատելու փոխարեն համեմատվել են՝** ներառելով ապրանքի գնին ավելացված ԱԱՀ-ն, ինչը հակասում է ՀՀ կառավարության 10.02.2011թ. 168-Ն որոշման 49-րդ կետին: «Սույն կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից ստացված եզրակացությունը: Սույն կետում նշված փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները»:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի, 10.02.2011թ. 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 15-րդ, 16-րդ, 21-րդ կետերի՝ գնման գործընթացի

կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան (ըստ գնման առարկայի, քանակի, ընդհանուր գնի, գնման ձևի) հաստատված գնումների պլանն է, որը պետք է հաստատել մինչև տվյալ տարվա փետրվարի 1-ը և յոթ աշխատանքային օրում հրապարակել տեղեկագրում, իսկ գնում կատարելու համար գնման առարկան պետք է ընդգրկված լինի գնումների պլանում: Աուդիտով ընդգրկված ժամանակաշրջանում կազմակերպությունը չունի տնօրենի կողմից հաստատված, տեղեկագրում հրապարակված գնումների պլան, ուստի չունի գնում կատարելու իրավական հիմք:

Համայնքներում հաճախ արձանագրված մի քանի խախտումների մասին.

• «Տեղական ինքնակառավարման մասին», «Հաշվապահական հաշվառման մասին», «Գնումների մասին» ՀՀ օրենքների, ՀՀ հողային օրենսգրքի, կնքված պայմանագրերի պայմանների կամ դրանցով նախատեսված ծավալների խախտումներ, որոնք կախված բնույթից, ենթակա են վերականգնման ՀՀ պետական բյուջե կամ համայնքային բյուջեներ: Այսպես՝

✓ գրեթե բոլոր համայնքներում առկա են հողի հարկի և գույքահարկի բազային տվյալների անճշտություններ, որոնք հանգեցնում են ՀՀ պետական բյուջեի ոչ ճիշտ հաշվառման,

✓ համայնքի սեփականությունը համարվող հողերի և գույքի վարձակալությունների գծով պակաս են հաշվարկվել վարձավճարները, չեն հաշվարկվել պայմանագրերով նախատեսված տույժ-տուգանքները,

✓ առկա են տեղական տուրքերի պակաս նախատեսման, հաշվառման և գանձման փաստեր,

✓ համայնքի սեփականությունը համարվող հողատարածքների և անշարժ գույքի օտարումն իրականացվել է «Անշարժ գույքի գնահատման գործունեության մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ,

✓ համայնքների կարիքների համար իրականացվող գնումները կատարվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ:

Նկատառումներ գնման առարկաների առավելագույն գների վերաբերյալ՝

○ Գնումների արդյունավետությունը մեծապես կախված է գնման առարկաների տեխնիկական հատկանիշների (բնութագրերի) և ելակետային (շուկայական) գների ճիշտ որոշելու հանգամանքից: Մինչդեռ, տեխնիկական բնութագրերի մշակման և կազմման միասնական ձևաչափ չլինելու, պարզվիրատուի մոտ տվյալ գնման առարկայի բնութագրման համար անհրաժեշտ մասնագետի կամ այլ մասնագետ հրավիրելու համար ֆինանսական միջոցների բացակայության պատճառով՝ կազմակերպությունների կողմից

մշակվում են ոչ ճիշտ տեխնիկական բնութագրեր, որոնք հստակորեն չեն բնութագրում գնման առարկաները, ինչի հետևանքով էլ ճիշտ չի որոշվում գնման առարկաների ելակետային գները:

○ Շրջանակային համաձայնագրերի ընթացակարգով հայտարարված որոշ գնման առարկաների (դեղորայք, սեղմված բնական գազ և այլն) ձեռք բերման նպատակով հայտարարված մրցույթները բազմաթիվ անգամ չեն կայանում (հատկապես փոքր չափաքանակի դեպքում)՝ մասնակից չլինելու հիմքով, իսկ թե մինչև հաջորդ մրցույթի հայտարարելը հրատապ ձեռք բերման ենթակա գնման առարկայի պահանջը ինչպես պետք է բավարարվի, սահմանված չէ:

Բաժնի կողմից Վանաձոր քաղաքի, Գուգարքի, Թումանյանի, Ստեփանավանի, Սպիտակի և Տաշիրի տարածաշրջանների կրթական հաստատությունների ղեկավարների և հաշվապահների մասնակցությամբ, կատարված աուդիտի հիմքով, կազմակերպվել են խորհրդակցություններ, որոնց նպատակն է հետազայում աշխատանքի մեջ բացառել արձանագրված թերություններն ու խախտումները, և դրանք շտկելու և հետազայում բացառելու ուղղությամբ տրվել են համապատասխան հանձնարարականներ: Ակնկալվում է գործունեության գրագետ և փոխվստահության միջավայր՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Կազմակերպությունների տնօրեններից ստացված գրություններով տնօրենները փաստել են խախտումների և թերությունների վերացման մասին:

Ներքին աուդիտի բաժնի կողմից բոլոր էական կետերով /ամբողջությամբ/ կատարվել է 2015թ. ծրագիրը:

Հաշվետվությունները, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. թիվ 143-Ն հրամանի, ծրագրային մուտքագրմամբ մշտապես ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարություն:

Այսքանը կատարված աշխատանքների և բացահայտված խախտումների ու թերությունների մասին: Ստորև ներկայացվում են կատարված աուդիտի մասով վերլուծական և համեմատական տվյալները:

Համեմատական վերլուծություն

Աուդիտի բաժնի կողմից 2014-2015թթ. կատարված ստուգումների մասին

Կազմակերպություններում իրականացվել է աուդիտ	2014	2015թ.	
		նախատեսված	իրականացված
Ընդամենը՝	85	91	91 /58 – ավարտված 33-րնթացքի մեջ/
Քաղաքապետարաններ	3	3	3
Կրթական	49	49	49
Առողջապահական	31	31	31*

Լոռի Փամբակի երկրագիտական թանգարան	0	1	1
Լոռու մարզպետարանի հաշվապահական հաշվառման բաժին	1	1	1*
Լոռու մարզպետարանի վարչատնտեսական բաժին	1	0	0
Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՍԱՏԳ	0	4	4
Անձնակազմի կառավարման	0	1	1*
Գյուղատնտեսական բաժին	0	1	1*

* աուդիտը իրականացվել է, սակայն առանձին դեպքերում դեռևս աուդիտի կոմիտեում չի քննարկվել

**Համեմատական վերլուծություն
Աուդիտի բաժնի կողմից 2014-2015թթ. արձանագրված խախտումների
քննարկման**

Արձանագրված խախտումների քննարկումը	2014թ. /մլն.դրամ/	2015թ. /մլն.դրամ/	2015թ.` 2014թ. նկատմամբ դրական տեղաշարժը /մլն դրամ/	2015թ.` 2014թ. նկատմամբ համեմատական ցուցանիշը` %
Ընդամենը	32.0	47.1	- 15.1	147.2
Վերականգնման կամ վերաձևակերպման	10.6	20.34*	-9.8	192.5
Պետական բյուջե վերականգնման*	3.6	6.4	-2..8	177.77

* Ստորև ներկայացվում է 2015թ. աուդիտի ընթացքում արձանագրված վերականգնման կամ վերաձևակերպման /20.4 մլն դրամ/ գումարների վերլուծությունը.

դրամ

	ընդամենը	ավելի +	պակաս-
Աշակերտներ`	3.215.977	1.726.590*	1.488.787
Եկամտային հարկ	2.094.224	1.417.688*	676.536
Անաշխատունակության նպաստներ	4.800.309	2.024.322*	2.775.587
Արձակուրդներ	2.517.986	32.081	2.485.905
Գործուղումներ	183.300	38.400	144.900
Աշխատավարձեր	3.527.503	3.449.739	77.764
Վերջնահաշվարկներ	658.157	413.808	244.349
Այլ (ԱԱՀ, շահութահարկ, արձ. նպաստներ, սոց ապահով. վճարներ, և այլն)	3.345.819	1.251.595*	2.094.224
ԸՆԴԱՄԵՆԸ	20.342.675	10.354.223	9.988.452
այդ թվում` պետական բյուջե վերականգնման ենթակա գումար	6.420.195	6.420.395*	

2015թ. ընթացքում մարզի տարբեր կազմակերպություններում կատարված աուդիտի ընթացքում աշխատանքային խումբը անդրադարձավ կազմակերպության գործունեության այլ ցուցանիշներին: Մասնավորապես՝ աշակերտների թվաքանակին, աուդիտի արդյունքների նկատմամբ կազմակերպությունների ցուցաբերած պատասխանատվությանը և այլն:

**Համեմատական վերլուծություն
2014-2015թթ. արձանագրված աշակերտների թվային տվյալների մասին**

Աշակերտների թվաքանակը	2014թ.		2015թ.		2015թ.՝ 2014թ. նկատմամբ դրական տեղաշարժը	
	թիվը	Գումարը /դրամ/	թիվը	Գումարը /դրամ/	թիվը	Գումարը /մլն դրամ/
Ընդամենը՝	45	2.093.268	77*	3.215.377	+32	+1.122.109
ավելի	23	967.938	45	1.726.590	+22	-758.652
պակաս	22	1.125.330	32	1.488.787	+10	+363.457

* 77 աշակերտի տարբերությունը արձանագրվել է թվով 19 դպրոցներում, որից՝ Սարատովկայի՝ 12, Պուշկինոյի՝ 9, Կաթնաղբյուրի՝ 6, Աքորիի՝ 7, Սպիտակի թիվ 8՝ 1, Ստեփանավանի վարժարանում՝ 2, Ստեփանավանի թիվ 6՝ 6, Գյուլագարակի՝ 3, Եղեգնուտ՝ 4, Դարպաս՝ 1, Սպիտակ թիվ 4՝ 1, Քարկովի՝ 4, Լեոնավանի՝ 2, Ջրաշենի՝ 1, Սպիտակի թիվ 1՝ 1, Արևաշողի՝ 5{3}, Լորուտի՝ 5, Տաշիրի թիվ 2՝ 3, Մեծավանի թիվ 1՝ 4:

Աշակերտների թվի ավելի կամ պակաս ներկայացնելը հիմնականում պատճառարանվում է, որ աշակերտների հաշվառման նոր կարգի համաձայն սկսած 2013թ. յուրաքանչյուր տարի այն պետք է հաշվառվի սեպտեմբերի 1-ի և հունվարի 1-ի դրությամբ:

**Տեղեկատվություն
2014-2015թթ. կատարված աուդիտի հիմքով տրված կարգապահական տույժերի մասին**

Արձանագրված խախտումների համար տրված կարգապահական տույժերը	2014թ.	2015թ.	2015թ.՝ 2014թ. նկատմամբ դրական տեղաշարժը /ավել /+/, պակաս -/	2015թ.՝ 2014թ. նկատմամբ համեմատական ցուցանիշը՝ %
Աուդիտի կոմիտեի նիստերի քանակը	5	6*	+1	120.0
Ազատում՝ զբաղեցրած պաշտոնից	0	1*	1	0
խիստ նկատողություն	2	0*	0	28.6
նկատողություն	6	4*	-2	66.7
Ընդամենը՝	8	5*	3	62.5

Հետագա անելիքները

Անցած 3 տարիների գործունեության արդյունքում կարող ենք փաստել, որ 2013թ. համեմատ 2015թ. կտրուկ պատկերը փոխվել է, նախկին խախտումների թերություններից, մասնավորապես՝ ուսուցիչների բաց թողած և փոխարինած ժամերի մատյանների վարման, գործավարության, աշխատանքի հաճախումների մատյանների վարման, աշխատակիցների անհարգելի բացակայություններ և մի շարք այլ գործառույթների գծով համարյա խախտումներ չեն արձանագրվում:

Ելնելով դրանից Ներքին աուդիտի բաժինը, հիմք ընդունելով իր եռամյա գործունեությունը, նախատեսում է հետագա աշխատանքներում ներառել այն գործառույթները, որոնք վերադաս ստուգող մարմինների /մասնավորապես՝ ՀՀ վերահսկիչ պալատ, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ առողջապահության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն և այլն/ ուշադրության կենտրոնում են՝ դրանով իսկ առավել հստակեցնել և կառավարելի կարելի է դարձնել մարզում հետագա ստուգումների ընթացքը՝ բացառելով խախտումները և թերացումները:

Պետք է փաստել, որ նախորդ տարիների աուդիտի գործառույթների իմաստով արձանագրվել են գոհացուցիչ արդյունքներ, որը և մեզ հնարավորություն է տալիս հաջորդ տարի ուսումնասիրել գործունեության այլ ուղղություններ, մասնավորապես՝

- **մանկավարժական խորհրդի գործունեությունը.**
- **ուսուցիչների շարունակական վերապատրաստման և ատեստավորման գործընթացները.**
- **ուսուցչի թափուր տեղի համար մրցույթների կազմակերպման գործընթացները.**
- **Տարիֆիկացիաներում և ֆինանսական հաշվետվություններում անճշտությունների բացահայտում.**
- **կառավարման խորհուրդների ձևավորման գործընթացները, նոր կարգի համապատասխան.**
- **ՀՀ ԿԳ նախարարի կողմից հաստատված ուսումնական պլանների պահանջների կատարումը:**
- **Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններում շահաբաժինների ՀՀ պետական բյուջե վճարման գործընթացը:**
- **Անաշխատունակության թերթիկների տրամադրման ընթացակարգը**
- **Մարզի առողջապահական ընկերություններում վճարովի ծառայությունների դիմաց կատարված մուտքերի արժանահավատությունը:**
- **Կազմակերպությունների կողմից ֆինանսական հոսքերի արդյունավետ իրականացման ընթացքի աուդիտ:**

Ներքին աուդիտի բաժնի գործունեությունն անմիջականորեն արտացոլվում է ՀՀ ֆինանսների նախարարության Ներքին աուդիտի տեղեկատվական կառավարման միասնական համակարգում, որտեղ արտացոլված են 2015-2016թթ. աշխատանքները, ներբեռնված են բոլոր աուդիտորական հաշվետվությունները, ռազմավարական և տարեկան ծրագրերը՝ տարեկան կտրվածքով, յուրաքանչյուր աշխատողի անհատական աշխատաժամանակի բաշխումը, աշխատանքային ծրագրերը, անկախության հայտարարագրերով վերստուգման արդյունքները:

.....
Ներքին աուդիտի բաժնի կողմից 2016թ. նախատեսված է իրականացնել 87 աուդիտ, այդ թվում՝ համակարգի գնահատման 53, ֆինանսական՝ 31 և կատարողականի՝ 3 (53 ՊՈԱԿ-ներ, 31 առողջապահական ընկերություններ, Լոռու մարզպետարանի աշխատակազմի սոցիալական ապահովության, Ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության, հաշվապահական հաշվառման բաժիններ):